


Hungkey



1936



ԶԵԿ ԼՈՆԴՈՆ

ՊՄԿ

# Ի Ո Գ Յ Ա



966/15/1X

ԽԱՀԱ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1930

-6 NOV 2011

Հարմ.  
4-4902  
8245  
L-76

4-4902

ԶԵԿ ԼՈՒԴՈՒ

Г.П.Б-ка обяа. экз.  
Лигр. 1030 г.  
Акт № 3-659


# Խ Ս Գ Յ Ա

(ՉԻՆԱԳՈ)

ՀԽԲ. № 20593

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈԱԿՎԱ

1930



Թարգմ. Բ. Մար.



Ախ-Չոն ֆրանսերեն չեր հասկանում: Նա նստել եր ծայրեծայր միքը դատարանի գահին գումար, հոգնած ու ձանձրացած, լսելով ֆրանսիական արագ խոսակցությունը, վոր հաճախ վրա ելին տալիս այս կամ այն աստիճանավորները: Ախ-Չոյի համար դա «մլթոնսերեն» եր և նա զարմանում եր ֆրանսիացիների հիմարության վրա, վորոնք այնքան յերկար են փնտռում Զունդ-Հայի սպանողին և, բայց և այնպես, չգտան նրան: Հինգ հարյուր կուլիներ (չինացի բանվորներ) գիտեյին, վոր սպանեց Ախ-Սանը, իսկ Ախ-Սանին մինչև իսկ չբանտարկեցին: Ճիշտ ե, բոլոր կուլիները գաղտնի միմիանց խոսք ելին տվել իրար չմատնել, բայց դե այդ այնքան պարզ եր և ֆրանսիացիները պետք ե վոր գտնելին, յերևան հանելին, վոր սպանողը Ախ-Սանն ե: Շատ հիմար են այդ ֆրանսիացիները...

Ախ-Չոն մի այնպիսի բան չի արել, վորի համար ինքը վախենար: Նրա ձեռքն այդ սպանության մեջ խառը չե: Ճիշտ ե, նա ներկա յեր այդ բանին և Շեմմերը — պլանտացիայի վերահսկիչը — սպանությունից անմիջապես հետո աճապարեց հանրակացարան և իրեն չորս թե հինգ ուրիշ չինացիների հետ գտավ այնտեղ... Բայց դե գրանից ի՞նչ... Զունդ-Հային հասցըրել ելին միայն յերկու հարված: Պարզ բան ե, վոր հինգ կամ վեց մարդ, յեթե յուրաքանչյուրը մի մի հարված հասցներ, յերկու վերք չեր ստացվիլ:


Այդպես եր դատում Ախ-Զոն, յերբ իր չորս ընկերների հետ  
միասին դատավորի առաջ կատարված դեպքի մասին սուտ ու մոլո-  
րեցնող ցուցմունքներ եր տախս ու շփոթեցնում: Նրանք լսել  
են աղմուկ, կռիվ, և ինչպես Շեմմերը, իրենք ել վազել  
դեպքի վայրը: Նրանք — ավելի շուտ եյին հասել — ահա և  
բոլորը: Ճիշտ ե, Շեմմերն իր տված ցուցմունքում ասաց, վոր  
ինքը լսելով աղմուկի ձայնը, առնվազն հինգ րոպեաշաբա սպասեց  
դուրսը և մտնելով ներս, նա տեսավ մեղադրյալներին տեղումը և  
նրանք չեյին կարող նոր մտած լինել այնտեղ, քանի վոր ինքը  
կանգնած եր հանրակացարանի դռան մոտ, բայց թե դրանից ի՞նչ:  
Ախ-Զոն և իր ընկերները վերջում վկայեցին, վոր Շեմմերը սիսա-  
վում ե: Վերջ ի վերջո իրեն բաց կթողնեն: Նրանք բոլորը հավա-  
տացած եյին դրան: Հո չի կարելի հինգ մարդու գլուխ կտրել՝  
խանչալով հասցրած յերկու վերքի համար: Բայցի դրանից, սպիտակ  
դեերից և վոչ մեկը չի տեսել սպանությունը: Բայց այդ ֆրանսիա-  
ցիները այնքան հիմար են... Զինաստանում — Ախ-Զոյին շատ լավ  
հայտնի յե — դատավորը կհրամայեր բոլորին սոսկալի տանջանքի  
յենթարկել և կիմանար ճշմարտությունը: Տանջանքի յենթարկելով,  
շատ հեշտ ե իմանալ ճշմարտությունը: Բայց այդ ֆրանսիացիները  
չեյին տանջում մարդկանց — ո վորքան հիմարներ են: Հենց այդպի-  
սով ել նրանք յերբեք չեն իմանա, թե ով ե սպանել Զունդ-Հային:

Բայց Ախ-Զոն առհասարակ վոչինչ չեր հասկանում: Անգլիական  
ընկերությունը, վորին պատկանում եր պլանտացիան, մեծ գումար-  
ներ վատնելով, Տայիտի յե բերել հինգ հարյուր կուլիներ: Ընկերու-  
թյան բաժնետերերը պահանջում են շահ, ոգուտ. իսկ ընկերությունը  
գեռ վոչ մի գրոշ չեր վճարել. ահա թե ինչու ընկերությունը չեր  
ցանկանում վոր իրեն այնքան թանկ նստած բանվորների մեջ սովորու-  
թյուն դառնար միմիանց սպանելը: Բայցի դրանից, կային ֆրան-  
սիացիներ, վորոնք ճգնում եյին — ինչ գնով ել ուղում ե լինի —  
ֆրանսիական «հրաշալի» որենքները փաթթել «խողիա»-ներին —  
«չինագուներին: Զկա ավելի լավ բան, քան ժամանակ առ ժամա-  
նակ որինակ ցույց տալը: Բայցի դրանից, ինչի համար ե նոր-  
կալեղոնիան, յեթե վոչ նրա համար, վոր աքսորվեն այնտեղ խեղճ

ու թշվառ մարդիկ, վորոնք պիտի տանջվեն իրենց ամբողջ կյանքում  
ի հատուցումն այն բանի, վոր նրանք յեղել են թույլ և հանցավոր:

Ախ-Զոն այդ բոլորից չեր կարող գլուխ հանել: Նա նստել եր  
դատարանի դահլիճում և սպասում եր դատավճուն, վորն իրեն, իր  
ընկերների հետ պիտի բաց թողներ պլանտացիան և ուղարկեր աշխատե-  
լու մինչև պայմանագրի ժամկետը: Շուտով այդ դատավճիուը կհանեն:  
Դատավարությունը հասնում եր իր վախճանին: Նա տեսնում ե այդ:  
Վկաների հարց ու վորձը թողին. դադարեց մլթոներեն դլրդոցը:  
Թրանսիացի դեերը, ըստ յերեւութին, հօգնեցին և նույնպես սպա-  
սում եյին դատավճունի արձակելուն: Սպասելով, Ախ-Զոն հիշեց այն  
ժամանակը, յերբ ինքը ստորագրեց պայմանագիրը և Տայիտի մեկ-  
նող շոգենավը նստեց: Դժվար եր ապրել նրա ծովախնյա փոքրիկ  
զյուղում և յերբ նա իր իրավունքը հարավում ծախեց հինգ տարով  
որեկան հիսուն մեկսիկական ցենտով, նա իրեն յերջանիկ եր  
համարում. իր գյուղում մարդիկ կային, վոր ամբողջ տարին աշխա-  
տում եյին տասը մեկսիկական դոլարով, կային կանայք, վոր  
ամբողջ տարին աշխատում, ցանցեր եյին գործում հինգ դոլարով,  
իսկ խանութպանների տներում ծառայողները ստանում եյին չորս  
դոլար մի տարվա ծառայության համար: Իսկ ինքը պիտի ստանա  
հիսուն ցենտ որեկան, մի որվա համար, միակ մի որվա համար նա  
պիտի ստանա այդ արքայավայել գումարը... Եր, ի՞նչ անենք, վոր  
աշխատանքը ծանը ե: Հինգ տարին լրանալուց հետո նա կիերա-  
գառնա տուն, -- այդ ասված ե պայմանագրում, — և նա այլևս չի  
բանելու: Նա իր ամբողջ կյանքում կլինի հարուստ, կունենա սե-  
փական տուն, կին և յերեխաներ, վորոնք կմեծանան և կհարգեն,  
կմեծարեն իրեն: Այս: Իսկ տան շուրջը փոքրիկ այգի կզցի, վորտեղ  
կհանգստանա և կհանձնվի իր խոհերին ու մտորումներին... այգու  
փոքրիկ լճակի մեջ վոսկի ձկնիկները կլողան, իսկ ծառերից կախված  
զանգակիկները կզնզնգան... և այդ բոլորը նա կշըջապատի բարձր  
պարսպով, վորպեսզի վոչ վոք չխանգարի իր հանգիստն ու խոհերը:


Յեվ ահա այդ հինգ տարուց յերեքն արդեն աշխատել, անցել ե:  
Նա շնորհիվ իր խսայնության արդեն հարուստ մարդ ե (իր հայրե-  
նիքի մասշտաբով), և միայն յերկու տարին ե վոր Տայիտի բամբակի



պլանտացիան բաժանում ե իրեն սպասող հանգստից ու մտորումներից: Յեկ ահա, նրա փողերը կորչում են Զունդ-Հայի այդ չարաքաստիկ սպանությամբ, վորին ներկա ե գտնվել: Յերեք շաբաթ քանտարկված եր և այդ յերեք շաբթվա յուրաքանչյուր որն իրեն արժեր հիսուն ցենտ: Բայց ահա, կհանեն դատավճիռը և ինքը կարող կլինի վերադառնալ իր աշխատանքին:

Ախ-Զոն քսան յերկու տարեկան եր: Նա ինքնագոհ, բարեսիրտ չինացի եր: Նա, ինչպես և բոլոր ասիացիք, նիհար եր, բայց դեմքը կլոր: Նրա դեմքը կլոր եր՝ լրացած լուսնի պես և արտահայտում եր զիջող բարյացակամություն և բարեսրառություն, մի բան, վոր սովորական չեր իր ցեղակիցների մեջ: Յեկ նրա արտաքինը չեր պատճառել, յերբեք չեր մասնակցել կոփների, չեր խաղում ազարտ խաղեր և այլն: Նրա հոգին դեռ այնքան չեր կոպտացել, վորպեսզի նա խաղացող դառնար: Նա բավարարվում եր քչով և սիրում եր հասարակ բավականություններ: Կիզիչ արեի տակ, բամբակի արտերում ծանր աշխատանքից հետո, իրիկվան հովին վայելած հանգիստն ու անդորրությունը նրան անսահման բավականություն եր պատճառում: Նա ընդունակ եր ամբողջ ժամերով զմայլված դիմել վորեե ծաղիկ և փիլիսոփայել աշխարհի խորհրդավոր գաղտնիքների մասին: Ավագու ծովի յեզրին մի կապույտ արագիլ, ջրի վրայից թռչող ձկան արծաթափայլ ցոլքը, կամ թե՛ վարդագույն արեի մայրամուտը ընդարձակ լազուններում, կարողանում եյին մոռացության տալ նրան ծանր աշխատանքի յերկար շղթան և Շեմմերի դաժան մտրակը:

Շեմմերը՝ կար Շեմմերը, գագան եր գագաններից, կատարյալ անասուն: Բայց նա իր աշխատավարձն եր ստանում... իրեն յենթակա հինգ հարյուր ճորտերից նա քամում եր նրանց վերջին կաթիլ արյունը, քանի դեռ, նրանք, մինչեւ պայմանագրի լրանալը ճորտեր եյին: Շեմմերը յեռանդով աշխատում եր քամել այդ հինգ հարյուր քրտնած մարմիններից նրանց ույժը և այդ դարձնում բամբակի պատրաստի հակեր — արտահանելու համար: Այդ բանում նրան ոգնում եր յերեք դյույմ լայնություն և մի արշին յերկարություն ունեցող հաստ կաշուց մտրակը, առանց վորի, նա տնից դուրս չեր գալիս



և վորը ստեղ-ստեղի իշնում եր կուլիների կռացած մերկ մեջքերին՝ ատրճանակի տրաքոցի պես։ Այդ տրաքոցը հաճախ եր լսվում, յերբ Շեմմերը ձին հեծած անցնում եր արտերի, դաշտերի միջով։

Մի անգամ, պայմանգիրը կնքած առաջին տարվա սկզբին գաղան Շեմմերը, բուռնցքի մի հարվածով սպանեց մի կուլի։ Հարվածն այն հարվածներից չեր, վոր ջարդեր այդ մարդու գլուխը ինչպես ձվի կճեպ, բայց նա այնքան ուժեղ եր, վոր վասեց ուղեղը և մարդը հիվանդանալով, մի շաբթից հետո մեռափ։ Բայց չինացիները նույնիսկ չմտածեցին գանգատվելու ֆրանսիացի գլերին—Տայիտի իշխողներին։ Հարկավոր եր ականջը սուր պահել։ Նրանք գիտեյին թե ինչպես պետք եր վարվել Շեմմերի հետ։ Նրա բարկությունից այնպես պետք ե փախչել, ինչպես փախչում եյին հարյուր-վոտանի սողունի թույնից, վոր թագնվում ե խոտերում և անձրևային գիշերները գալիս մտնում ե նրանց անկողինը։ «Չինագո»—այդպես եյին կոչում չինացիներին ծույլ և թուխ Տայիտի կղղիաբնակները— վախենում եյին բարկացնել Շեմմերին։ Բարկացնել Շեմմերին— այդ կնշանակեր հանձնել նրան ամբողջ աշխատանքը։

Շեմմերի այդ մի հարվածն ընկերության նստեց հազարավոր դոլարներ, իսկ Շեմմերին՝ վոչ մի միա։ Ֆրանսիացիները, բոլորովին զուրկ գաղութային բնազդից, ինչպես յերեխաներ, խաղում եյին «կղզու յեկամուտները մեծացնելու» խաղը ուրախ եյին միայն անգլիական ընկերության ձեռք առած միջոցներին։ Ի՞նչ դժբախտություն ե— Շեմմերը և իր սոսկալի բռնւնցքը։ Մեռնող չինագո։ Չեզ վոր դա մի սոսկ «խողյա» եր— մի չինագո։

Բացի այդ, նա արեանարությունից ե մեռել՝ այդպես ե ասված բժշկական վկայագրում։ Ճիշտ ե, Տայիտի պատմության մեջ վոչ վոր և վոչ մի ժամանակ արևիարությունից չի մեռել, բայց այդ չինագոյին վիճակված եր մեռնելու դրանից։ Համենայն դեպս, բժիշկն իր գեկուցման մեջ այդպես արտահայտվեց։ Նա չափազանց անկեղծ եր։ Դիմիդենտը պետք ե վճարել, հակառակ դեպքում մի մնանկության դեպք ևս կավելանա Տայիտի սնանկության պատմությանը։

Դժվար եր հասկանալ այդ սպիտակ դեերին։ Նստած դատարանի դահլիճում և սպասելով դատավճռին, Ախ-Չոն խորհում եր այն մասին,

թե ինչ անհմանալի մարդիկ են դրանք, Յերբեք չեր կարելի ասել թե ինչ կա նրանց մտքում։ Նա տեսել ե, գիտե այդ գեերից մի քանին։ Նրանք բոլորը միմիանց նման են, — սպաներ և նավաստիներ, ֆրանսիական պաշտոնյաներ, պլանտացիայում յեղած սակավ սպիտակները, դրանց թվում Շեմմերը։ Նրանց դատողությունն ու շարժ ու ձեերը այնպես մուժ ու խորհրդավոր եյին, վոր ըմբռնել հնարավոր ձեր այնպես մուժ ու խորհրդավոր եյին, վոր գալում էյին առանց վորեւ շոշափելի պատճառի և չեր։ Նրանք բարկանում եյին առանց վորեւ շոշափելի պատճառի և չեր։ Նրանք գայրութը միշտ վտանգավոր եր։ Այդ վայրկյաններին նրանք կատարելապես վայրի գաղանների եյին նմանվում։ Նրանք ընկճվում, կատարելապես վայրի գաղանների եյին նմանվում։ Նրանք հուսահատվում եյին շատ չնշին բաներից, իսկ տեղն յեկած ժամանակ գիտեյին աշխատել չինագոներից ել լավ։ Նրանք այնպես զուսպ չեյին, ինչպես չինագոները։ Նրանք շատակեր եյին. չափազանց շատ եյին ուտառում և ավելի շատ խմում։ Չինագոն յերբեք չեր կարող իմանալ թե սպիտակներին ինչ դուր կգա և ինչը կկատաղեցնի նրանց։ Յերբեք չինագոն չեր կարող այդ խմանալ նախորդը։ Այն, ինչ վոր հավանեց մի անգամ, մի բոպեյից հետո կարող եր առաջ բերել սոսկալի կատաղություն։ Կարծես թե սպիտակ դեերի աչքերին կարմիր, վորը ծածկում եր նրանց խական գեմքը չինագոյի աչքերից։ Յեկու իրումն այդպիսի սպիտակ դեերի առաջանակ են սպիտակ մարդիկ և խսկան դեեր։ Նայեցեք հենց թեկուզ Շեմմերին։

Ախ-Չոյին տարորինակ եր թվում, վոր այդպես յերկարացնում են գատավիրը, Դատապարտվողներից վոչ մեկը ձեռք չի տվել Չունդ-Հային։ Ախ-Սանն ե սպանել նրան մեն-մենակ։ Ախ-Սանն ե այդ արել։ Նա Չունդ-Հայի գլուխը ծոել ե դեպի յետ, բռնել ե նրա հուսից, իսկ մյուս ձեռքով, յետեկից, յերկու անգամ դանակը խրել ե նրա մարմինը։ Յերկու անգամ նա դանակը խրել ե։ Այստեղ, դատարանի դահլիճում, Ախ-Չոն վակելով աչքերը, նորից պատկերացրեց սպանության գործողությունը—կոիվ և հայոյանք, անվայել հայոյանք

—

պաշտելի նախնիքներին, անեծք ու սոսկալի հայոյանք դեռ ևս  
չձնված սերունդներին, Ախ-Սանի դանակի յերկու հարվածը Զունդ-  
Հային... Լայն, բաց գոները, կատաղած ներս վազող Շեմմերը,  
Ախ-Սանի փախուստը, Շեմմերի մտրակը, վոր ներկա յեղողներին  
խծեց մի անկյուն և ատրճանակի պայթյունը, վորով Շեմմերն  
իրեն ոգնության եր կանչում... Մտքի մեջ վերհիշելով այդ բոլորը,  
Ախ-Չոն դողաց Մտրակի այդ մի հարվածը վիրավորեց իր այտը և  
կաշին մի փոքր պլոկեց: Վկաների նստարանից Շեմմերը ցույց տվեց  
այդ վերքը, յերբ ճանաչեց Ախ-Չոյին: Միայն այժմ են անհետացել  
հարվածի հետքերը: Բայց հարված եր հա... Յեթե մի կես դյույմ  
ել մոտ լիներ, Ախ-Չոյի աչքն այլևս չեր լինի: Հետո, Ախ-Չոն  
մոռացավ այդ բոլորի մասին—նրան պատկերացավ մտածումների  
և հանգստյան այգին, վորն իրեն և պատկանելու, յերբ նա վերա-  
դառնա հայրենիք:

Նա նստել եր անտարբեր ու անփույթ դեմքով, այն ինչ դա-  
տավորը կարդում եր դատավճիռը: Անտարբեր ու անփույթ ելին  
նույնպես իր չորս ընկերների դեմքերը: Նրանք մնացին անտարբեր  
և նրանից հետո, յերբ թարգմանը բացատրեց նրանց, վոր բոլոր  
հինգն ել հանցավոր են ճանաչված Զունդ-Հայի սպանության գոր-  
ծում և վոր Ախ-Չոռու գլուխը կկտրեն, Ախ-Չոն պետք ե քսան  
տարի մնա Նոր-Կալեդոնիայի բանտում, Վոնդ-Լին՝ տասներկու  
տարի, իսկ Ախ-Տոնդը — տասը տարի: Վրդովվելն անոգուտ եր: Ախ-  
Չոռուն նույնպես մնաց անփույթ ինչպես մումիա, թեկուզ նրա գլուխը  
պետք ե կտրեն: Մագիստրատը ավելացրեց մի քանի խոսքով, իսկ  
թարգմանը թարգմանեց՝ քանի վոր Ախ-Չոռու դեմքը ավելի և վիրա-  
վորված Շեմմերի մտրակների հարվածներից և յեթե մեկն ու մեկը  
պետք ե մեռնի, այդ պետք ե Ախ-Չոռուն վիճակի: Այն հանգա-  
մանքը, վոր Ախ-Չոյի դեմքը նույնպես վիրավորված ե, համոզեցուցիչ  
ապացույց եր, վոր նա ներկա յե յեղել սպանության և անկասկած  
մասնակցել այդ բանում, ուստի և նրան դատապարտեցին քսան  
տարվա տաժանակիր աշխատանքի: Յեկ այդպես վարվեցին ամենքի  
հետ — Ախ-Տոնդին ևս տասը տարով աքսորեցին: Յուրաքանչյուրը  
դատավճու հիմնավորումը տրված եր բարեխղճորեն. — «Թող չինագու-

—

ները հիշեն այս դասը, — հայտարարեց վերջում դատավորը: — Նրանք  
պետք ե իմանան, վոր որենքը Տայիտիում կիրագործվի, թեկուզ  
յերկինքը փլվելու լինի»:

Յեկ ահա հինգ չինագոներին տարան կրկին բանտ: Նրանք  
չշշտացան և վոչ ել վրդովվեցին: Դատավճիռն անսպասելի յեր,  
այսինքն հենց այն եր, ինչ վոր նրանք սովոր ելին տեսնել սպիտակ  
դերի գործերում: Զինագոն նրանցից հազիկ կարող եր ուրիշ բան  
սպասել: Իրենց չկատարած հանցանքի համար ծանր պատիժն  
ավել տարորինակ չեր, քան անթիվ ու անհամար ուրիշ տարորի-  
նակություններ, վոր գործում ելին սպիտակ դերը: Այդ շաբաթ-  
ներին, Ախ-Չոն հաճախ նայում եր Ախ-Չոռուին գաղտնի հետաքըլ-  
քըլությամբ: Նրա գլուխը պետք ե կտրեյին կառավինարանում: Նա  
ել չի տեսնի վոչ ծերության որեր և վոչ ել հանգստյան այգի:

Ախ-Չոն վիլխսոփայում եր և մտորում կյանքի և մահվան մասին:  
ինչ վերաբերում եր իրեն, նա բոլորովին շփոթված չեր: Քսան  
տարի — վոչ ավել, քան քսան տարի: Միայն այդքան ժամանակով  
եր հեռանում իրենից իր այգին — ուրիշ վոչինչ: Նա յերիտասարդ  
եր և նրա արյան մեջ նստած եր Ասիայի համբերությունը: Նա  
կարող եր սպասել այդ քսան տարին. այդ ժամանակամիջոցում իր  
ավյունը կանցներ և նա ավելի հարմար կլինի այգու մեջ անդորր  
ու խաղաղ մտածողության: Նա նույնիսկ իր այգուն անուն եր  
գտել՝ այգին կանվանի «Վաղորդյան հանգստի այգի»: Այդ միտքն  
ամբողջ որերով նրան միմիթարում եր և նա այնքան եր տարված  
դրանով, վոր հեղինակեց բարոյագիտական աֆորիզմ համբերության  
առաքինության մասին և այդ աֆորիզմը շատ դուր յեկալ Վոնդ-  
Լի-ին և Ախ-Տոնդին: Բայց Ախ-Չոռուն մնաց անտարբեր դեպի այդ  
ափորիզմը: Նրա գլուխն վիճակվում եր այնքան շուտ բաժանվել իր  
մարմնից, վոր այդ գեպքին սպասելու կարիքը չեր զգում: Նա լավ  
ծխում եր, շատ լավ ուտում, լավ քնում և յերբեք չեր անհանգըլ-  
տանում ժամանակի դանդաղ ընթացքի համար:

Կրյուշն ժամանակմ եր: Նա քսան տարի իբրև տաժանակիր  
ապլու եր գաղութներում, սկսած Նիհերիայից և Սենեգալից մինչև  
հարավային ովկյանոսը և չի կարելի սսել, վոր այդ քսան տարին

• = • = • = • = • = • = • = • = • = • =

զգալիորեն պայծառացնելին նրա բութ ուղեղը: Նա նույնքան հիմար եր և դանդաղամիտ, ինչպես և առաջ, յերբ հարավային թրանսիայի գյուղերից մեկում գեղջուկ եր: Նա գիտեր կարգապահություն և իշխանության ահը և միակ տարբերությունը աստծու և յենթասպայի մեջ կայանում եր նրա համար միայն հլու հպատակության մեջ, վոր ցույց եր տալիս նրանց: Ճիշտ ասած, Կրյուշոյի խելքով, յենթասպան բարձր եր մինչև անգամ աստծուց, բացի կիրակիներից, վորակիսի որերը պատկանում յեն աստծու քարոզիչներին: Աստված սովորաբար գտնվում եր շատ հեռու, մինչդեռ յենթասպան միշտ ձեռքի տակն եր:

Յեվ ահա այդ Կրյուշոն գլխավոր դատավորից հրաման ստացավ բանտապետին ուղղած, վոր, նա բանտապետը Կրյուշոյին հանձնի «Ախ-Զոռու անձնավորությունը»: Այնպես եր պատահել, վոր նախորդ յերեկոյան գլխավոր դատավորը ճաշի եր հրավիրել ֆրանսիական զրահանավի կապիտանին և սպաներին: Նրա ձեռքերը դոդում ելին յերբ նա գրում եր հրամանը, իսկ աչքերն այնպես սարսափելի ցավում ելին, վոր նա հրամանը չկարգաց — չե՞ վոր նա ստորագրել եր միայն չինագոյի մահվան դատավճիռը — և չնկատեց, վոր Ախ-Զոռույի ազգանվան վերջին տառը բաց եր թողել: Հրամանում գրված եր «Ախ-Զո», և յերբ Կրյուշոն հրամանը ներկայացրեց բանտապետին, վերջինս հանձնեց նրան Ախ-Զոյին: Կրյուշոն իր հետ վերցրեց այդ «անձնավորությանը», դրեց յերկու ջորիներով լծած սայլին և գնաց:

Ախ-Զոյին սայլին նստած հաճելի յեր: Նա նստել եր ժանդարմի մոտ և փայլում եր դեմքը: Ավելի պայծառ կերպով սկսեց փայլել նրա դեմքը, յերբ տեսավ, վոր ջորիները ուղղվում են դեպի հարավ, դեպի Ատիմառնու: Անկասկած ե, վոր Շեմմերն ե ուղարկել իր յետեից: Նա Շեմմերին պետք ե յեկել: Ինչ վոր ե, նա լավ կաշխատի: Շեմմերն այլևս վոչ մի առիթ չի ունենա գանգատվելու: Որը տաք եր: Քամին դադարեց: Զորիները քրտնքի մեջ կորած ելին, Կրյուշոն ել եր կորած քրտնքի մեջ, Ախ-Զոն՝ նույնպես: Բայց Ախ-Զոն տանում եր տոթն առանց վորեւ դժվարության: Նա յերեք տարի արդեն աշխատել ե պլանտացիայում այս կիզիչ արեկ տակ: Նա

• = • = • = • = • = • = • = • = • =

փայլում եր այնպիսի մի բարեսրտությամբ, վոր նույնիսկ Կրյուշոյի կարծր հոգին զարմացավ:

— Այս, դու զվարճավի յես, — խոսեց նա վերջապես:

Ախ-Զոն գլխով արեց և ավելի փայլեց ու ժպտաց: Կրյուշոն նրա հետ խոսում եր կանակների (Պոլինեզիայի բնակիչների) լեզվով, իսկ այդ լեզուն Ախ-Զոն, ինչպես բոլոր չինագոնները և ոտարահպատակ դեերը, լավ եր հասկանում:

— Դու շատ ես ծիծաղում, — կշտամբանքով նկատեց Կրյուշոն, — այսպիսի որը մարդու սիրտ ե կտրատվում...

— Չե՞ վոր յես նոր միայն դուրս յեկա բանտից:

— Յեվ միայն, — ուսերը թափահարեց ժանդարմը:

— Այս, միթե՞ դա քիչ ե, — պատասխանեց նա:

— Կնշանակե դու ուրախ ես այն բանից, վոր քո գլուխը պիտի կտրեն:

— Ախ-Զոն մի վարկյան շփոթված, նայեց ժանդարմին և ասաց:

— Ինչպես թե, չե՞ վոր յես վերադառնում եմ Ատիմառնո, պլանտացիայում Շեմմերի համար աշխատելու: Միթե՞ դու ինձ Ատիմառնո չես տանում:

Կրյուշոն մտազբաղ վոլորեց իր յերկար բեիները:

— Ահա թե ինչ, — խոսեց վերջապես Կրյուշոն, մտրակելով շորիներին, — դու չգիտեմ:

— Ի՞նչ չգիտեմ, — Ախ-Զոյին պատեց մի անորոշ յերկյուղ, — միթե՞ Շեմմերն ինձ այլևս գործի չի վերցնելու:

— Այսորվանից դենը չի վերցնի: — Կրյուշոն ծիծաղեց: Սա սուք կատակ եր: — Տեսնում ես, դու եզուց արդեն չես կարող աշխատել: Գլուխը կտրած մարդը չի կարող աշխատել: Ճիշտ չեմիթե՞, — նա բոթեց չինագոյի կողը և ծիծաղեց:

Ախ-Զոն այլևս չեր խոսում, մինչև վոր անցան մի ամբողջ մղոն: Հետո նա նորից խոսեց:

— Միթե՞ Շեմմերն ուզում ե կտրել իմ գլուխը:

Կրյուշոն լոելայն գլխով արեց:

— Դա սխալ ե, — հպարտությամբ ասաց Ախ-Զոն: Հարգելի դատավորը վճռեց, վոր յես աքսորված մնամ քսան տարի նոր-կալեզոնիայում:

— Յես, — Ախ-Չոռւն չեմ... — սկսեց Ախ-Չոն:

Ժանդարմը ծիծաղեց: Դա չար հանաք եր: Զվարճալի շինագոն իրեն միամիտ եր ձեացնում: Զորիները բանանի պուրակը անցել և կես մղոն գնացել եյին ծովի ափով, յերբ Ախ-Չոն նորից խոսեց:

— Յես ասում եմ քեզ, յես — Ախ-Չոռւն չեմ: Պատվելի դատավորը չի հրամայել կտրել իմ գլուխը:

— Մի վախենա, — ասաց Կրյուշոն մարդասիրությունից դըրդված, ցանկանալով թեթևացնել իր գերյալի վիճակը. — այդպես մեռնել դժվար չե, — նա յերկու մատով չտուացրեց — մեկ... և պատրաստ ե: Դա այն չե վոր թոկի ծայրին մեռնես, թափահարես վոտքերը, գեմքը ծամածուս ամբողջ հինգ րոպե: Դա մեկ ե՝ թե կացնով ճուտ սպանես. գլուխը կտրեցիր՝ պլծավ: Այդպես ել մարդու հետ — թրըխի... և պատրաստ ե: Նա չի ցավեցնում, մինչև իսկ չի թվում, թե ցավեցնում ե: Դու մինչև իսկ չես մտածում. գլուխդ այնպես արագ ե թռչում, վոր դու չես կարող մտածել: Շատ լավ ե: Ահա, այդպես կցանկանայի մեռնել — իսկույն, անմիջապես: Բաղդավոր ես դու, վոր հենց այդպես պիտի մեռնես: Զե վոր դու կարող եյիր վարակվել քոսով և մաս-մաս մարմիդ մսերը կթափվեյին — մեկ՝ ցուցամատդ, մեկ՝ մեծ մատդ, և հետո՝ վոտքերիդ մատները: Յես տեսա մի մարդ տաք ջրից այրված: Յերկու որ նա մերձիմահ եր: Մի վերսափ վրա կարելի յեր լսել նրա գոռոցը, իսկ դու — այդպես հանգիստ: Զըրխի, — դանակը կտրում ե վիզդ և, պատրաստ ե: Դանակն, ասենք, դեռ խոտուտ ել ե անում: Ո՞վ կարող ե ասել: Վոչ վոք: Մեռնողն այդ վիճակում չի վերադառնում, վորպեսզի պատմի այդ մասին:

Այս վերջին խոռքերն ինքն արտասովոր սրամիտ գտավ և ուղիղ կես րոպե ջղաձղաբար ծիծաղում եր:

Այդ ծիծաղը կիսով չափ շինծու յեր, քանի վոր նա ել մարդասիրական մի պարտականություն եր, վորով նա պարտք համարեց քաջալերել չինագոյին:

— Բայց յես ասում եմ քեզ, վոր յես — Ախ-Չոն եմ, — պնդեց նա. — յես չեմ ուզում, վոր իմ գլուխը կտրեն:

Կրյուշոն խոժոռվեց: Զինագոն շատ հեռուն գնաց իր հիմարության մեջ:

— Յես, — Ախ-Չոռւն չեմ... — սկսեց Ախ-Չոն:

— Լավ, — ընդհատեց նրան ժանդարմը: Նա քիթ ու մռութը կախեց ընդունելով կատաղի կերպարանք:

— Ասում են քեզ, յես չեմ... — նորից սկսեց Ախ-Չոն:

— Լոել, — կատաղի կերպով ասաց Կրյուշոն:

Դրանից հետո նրանք յերկար գնացին լուռ: Պապեետայից մինչև Ասիմանոն քսան մղոն ճանապարհ եր և նրանք գնացին այդ տարածության կեսից ավելին, յերբ չինագոն նորից վորոշեց խոսել:

— Յես տեսա քեզ դատարանի դահլիճում, յերբ հարգելի դատավորը փնտրում եր մեր հանցանքը, — սկսեց նա: — Շատ լավ, դու հիշում ես, վոր Ախ-Չոռւն, վորի գլուխը պետք ե կտրեն, ոու հիշում ես, վոր նա, Ախ-Չոռւն, բարձրահասակ մարդ եր: Մեկ ինձ նայիր:

Նա հանկարծ բարձրացավ և Կրյուշոն տեսավ, վոր իր առաջ կանգնած ե ցածրահասակ մեկը: Յեկ նույն րոպեյին Կրյուշոն հիշեց Ախ-Չոռի հասակը, վոր բարձր եր:

Ժանդարմին բոլոր չինագոները թվում եյին միատեսակ: Մեկի դեմքը նման եր մյուսին: Բայց տարբերել բարձր հասակը ցածր հասակից նա կարող եր և հասկացավ, վոր իր կողքին նստածն այն մարդը չե: Նա հանկարծ քաշեց ջորիների սանձը և կանգնեցրեց սայլը:

— Տեսնում ես թյուրիմացությունը. ինձ ուրիշի տեղ են ընդունել, — բարեսրտորեն ժպտալով, ասաց Ախ-Չոն:

Բայց Կրյուշոն մտածում եր: Նա արդեն ափսոսաց, վոր կանգնեցրեց սայլը: Իրեն անհայտ եր գլխավոր դատավորի սխալը և նա չգիտեր ինչպես դուրս գալ այս զրությունից: Բայց նա գիտեր, վոր իրեն հանձնել են՝ տանել այդ չինագոյին Անտիմառն և վոր իր պարտքն ե տանել, ե, ի՞նչ անենք, վոր այս՝ այն չինագոն չե, վորի գլուխը պիտի կտրեն: Զե վոր սա ել ե չինագո: Իսկ ի՞նչ ե չինագոն... Բացի այդ, գուցե և վոչ մի սխալ չկա: Զե վոր նա չգիտեթե ինչ կա իր իշխանավորի մտքում: Իշխանությունը լավ գիտե իր գործը... ինքն ի՞նչ ե վոր մտածի իշխանավորի մասին: Մի անգամ, շատ առաջ, նա վորձեց մտածել իշխանավորի մասին և յենթա-

սպան ասաց նրան, — «Կոյուշի, դու հիմար ես. քանի շուտ այդ հասկանաս, ավելի լավ քեզ համար: Քո գործը չե մտածել. դու պետք ե լսես, իսկ մտածել՝ թողնես նրանց, ովքեր բարձր են քեզնից»: Այս հիշողությունը այժմ ել խայթում եր նրան: Յեվ յեթե նա յետ դառնա Պապեետե, այն ժամանակ նա կհետաձգի Ատիմառնիայում լինելիք գլխատումը, իսկ յեթե սխալվի այդ բանում, նա մի լավ կուտի յենթասպայից, վոր սպասում եր կալանավորին: Բացի այդ, միևնույն ե, Պապեետեյում ուտելու յե:

Նա ջորիներին մտրակեց և առաջ անցավ: Նա նայեց ժամացույցին. հիմա յել դեռ կես ժամով ուշացած եր և, յենթասպան, հավանորեն կրարկանա: Նա արագացրեց ջորիների վագքը, Ախ-Չոն քանի ավելի յեր պնդում պարզել սխալը, այնքան կրյուշոն համառում եր: Այն հանգամանքը, վոր նա տանում ե իր հետ վոչ թե այն մարդուն վորին իսկապես պետք եր տանել, ավելի եր նրան գրգռում: Յեվ այն, վոր սխալը կատարվել ե վոչ իր մեղքով, ամրապնդում եր նրան այն համոզումը, վոր ինքը շիտակ ե վարվում: Նա գերազասում եր մի դյուժին անմեղ չինագոների մատնել նույն վիճակին, քան թե իրեն յենթարկել իշխանավորի բարկության:

Ինչ վերաբերում ե Ախ-Չոյին, նրանից հետո յերբ ժանդարմը խփեց նրա գլխին մտրակով և գոռալով հրամայեց լոել, նրան վոչինչ չեր մնում անել, քան լոել: Ճանապարհը լուռ շարունակվում եր:

Ախ-Չոն խորհում, մտածում եր այդ անդրծովյան դկերի անիմանալի «Փանդերի» մասին: Վոչ մի կերպով չեր կարելի այդ բաները բացատրել: Այն, ինչ վոր իրեն եյին անում, նրանք բացարձակորեն ամենքի հետ եյին վարվում: Սկզբում նրանք մեղադրեցին հինգ անմեղ մարդկանց, իսկ այժմ պատրաստվում են կտրել մի մարդու գլուխ, վորին, հենց իրենք, իրենց խորը տգիտությամբ, գտան արժանի վոչ ավել, քան քսան տարի բանտարկության: Յեվ նա վոչինչ չեր կարող անել այդ բանի դեմ: Նա պետք ե միայն նստիւտասի և ընդունի այն բոլորն, ինչ վոր հաճելի յե իր կյանքի տերերին: Լինում եյին վայրկյաններ, յերբ նրան սարսափ եր պատում և նրա ամբողջ մարմինը ծածկվում սառը քրտինքով, բայց նա

տանում եր այդ: Նա աշխատեց հաշտվել իր բախտի հետ, հիշեց և կրկնեց ինքն իրեն մի քանի նախաղասություն «Իիմ-Զիլ-Ռւեն» («Մեղմ Ռւղիի որհներգը»), բայց դրա տեղ նրա առաջ պատկերանում եր հեթանօթական այգին, ստեղծված իր յերևակայության մեջ, հանգստի և մտորումների համար: Դա նրան շփոթում եր և նա վերջացրեց նրանով, վոր հանձնվեց յերազանքներին և սկսեց ականջ դնել այգու ծառերին կախված զանգակների ձայնը: Այդ վիճակում հաջողվեց նրան հիշել և մտքում «Քաղել» «Մեղմ Ռւղիի որհներգը»:

Այդպես անցավ ժամանակը, մինչև վոր նրանք հասան Ատիմառնո և ջորիները մոտեցան կառափնարանի ստորոտին, վորի շվաքի տակ կանգնած սպասում եր անհամբեր յենթասպան: Ախ-Չոյին շտապ քաշ տվին կառափնարանի սանդուխքների վրա: Ներքելում, մի կողմն եյին հավաքվել պլանտացիաների բոլոր կուլիները: Շեմմերը վորոշել եր այդ դեպքը խրատական որինակ դարձնել մյոււներին. Նա հավաքեց կուլիներին դաշտից և ստիպեց նրանց ներկա լինել մահապատճին: Կուլիները տեսնելով Ախ-Չոյին, կիսաձայն ինչ վոր մի բան շշնջացին: Նրանք տեսնում եյին սխալը, բայց իրենց գիտցածը մտքներում թողեցին: Անկասկած, անհասկանալի գերը փոխել են իրենց մտադրությունը: Փոխանակ մեկ անմեղ մարդու կյանք խլելու, նրանք ուզում են այդ խլել մի ուրիշ անմեղից: Ախ-Չոյու, կամ Ախ-Չո — միևնույնը չե վորն ե, նրանք յերբեք չեյին կարողանում հասկանալ սպիտակ շներին, ճիշտ այնպես և սպիտակ շները չկարողացան հասկանալ իրենց: Ախ-Չոյին վիճակված ե գրկվել գլխից, իրենց ել, յերկու տարվա ծառայությունից հետո վիճակված եր վերադառնալ Զինաստան:

Շեմմերը ամեն բանում վարպետ եր. Նա ինքն եր շինել գիլյոտինը, թեև յերբեք տեսած չկար այն. — Փրանսիացի աստիճանավորները բացատրեցին նրան գիլյոտինի ուժը: Իր առաջարկով, նրանք կարգադրեցին մահապատճիքը կատարել Ատիմառնայում և վոչ Պապետեյում: Շեմմերը ապացուցեց, վոր հանցագործության վայրը ամենանպատակահարմար տեղն ե պատճի իրագործման համար. բացի այդ, դեպքը փրկարար ազգեցություն կթողնի պլանտացիայում աշխատող հինգ հարյուր չինագոների վրա: Շեմմերը ինքն ել ցանկու-



Թյուն եր հայտնել լինել դահիճ և իբրև այդպիսին գտնվում եր կառափնարանի վրա, փորձելով իր սարքած գործիքը։ Մարդու վզի հաստությամբ մի փայտ եր դրված գիլյոտինի տակը։ Ախ-Զոն դյութված նայեց գիլյոտինին։ Դերմանացին շուռ տալով լծակը, բարձրացրեց դանակը կառուցվածքի ամենաբարձր տեղը, քաշեց հաստ պարանից և դանակն ընկնելով կայծակի արագությամբ, ուղիղ մեջ տեղից կտրեց փայտը։

Ի՞նչպես ե գործում, — հարցրեց յենթասպան, բարձրանալով կառափնարանի վերել։

— Հրաշալի յե, — հրճվանքով պատասխանեց Շեմմերը։ — Տուր, ցույց տամ քեզ։

Նա նորից բարձրացրեց դանակը, ձգեց պարանից և դանակը շարաչով կտրեց հաստ փայտը. բայց այս անգամ փայտի միայն կեսը կտրեց։

Յենթասպան մուայլվեց։

— Այդպես չի կարելի, — արտասանեց նա։

Շեմմերը սրբեց ճակատի քրտինքը։

— Պետք ե ծանրությունը շատ լինի, — հայտարարեց նա։ Մոտենալով կամուրջի ծայրին, նա պահանջեց դարբնից յերկաթի տաս կիլոդրամանոց մի կտոր։ Յերբ նա կուցավ և սկսեց ամրացնել յերկաթը դանակի լայն ծայրին, Ախ-Զոն հայացքը հառեց յենթասպային և վորոշեց ոգտվել բարեհաջող հանգամանքից։

— Հարգելի դատավորն ասաց, վոր պետք ե կարել Ախ-Զոուի գլուխը, — սկսեց նա։

Յենթասպան անհամբեր գլխով արեց։ Նա մտածում եր տասնը յերկու մղոն հեռու տարածության վրա կղզու ծովափին ասլըող գեղեցիկ Բերտայի, մարգարտավաճառ Լաֆերի աղջկա մասին, վոր իրեն եր սպասում։

— Դե, բա, յես — Ախ-Զոուն չեմ, յես Ախ-Զոն եմ։ Հարգելի բանտապետը սխալվել ե։ Ախ-Զոուն բարձրահասակ մարդ ե, իսկ յես, դու տեսնում ես, յես կարճահասակ եմ։

Յենթասպան արագ ըրջեց գեպի նա և տեսավ սիալը։

— Շիմմեր, — հրամայողաբար գոչեց նա, — յեկ այստեղ։

Գերմանացին մումուաց ինչ վոր բան, բայց շարունակեց դանակին կուացած մնալ, մինչև յերկաթի կտորը ամուր կերպով չկապեց։

— Պատրամստ ե քո չինագոն, — հարցրեց նա։

— Նայիր նրան, — յեղավ պատասխանը, — նա ե արդյոք, այս չինագոն։

Շեմմերն ասղեց։ Մի քանի վայրկյան նա հայհոյեց և ափսոսանքով դիտեց իր ձեռքի ստեղծագործությունը, վոր այնքան շատ ցանկանում եր գործի գցել։

— Ահա ինչ, — խոսեց նա վերջապես, — մենք չենք կարող հետաձգել այս գործը։ Յես արդեն պատրաստվել եմ։ Յես չեմ կարող սպասել իսկական հանցավորին։ Բոլորը մեկ ե, մի բան կսարքենք։ Չե վոր սա ել ե չինագոն։

Յենթասպան հիշեց իրեն սպասող յերկար ճանապարհորդությունը և մարգարտավաճառի աղջկան ու տատանվեց։

— Չե վոր բոլորը կրյուշոյի վրա կձգեն, յեթե ճշմարտությունը բացվի, — պնդեց գերմանացին։ — Բայց դժվար թե բացվի։ Ախ-Զոուն, համենայն դեպս, չի բանա այդ։

— Վաչ. համենայն դեպս, վոչ կրյուշոյի վրա, — պատասխանեց յենթասպան, — հավանորեն բանտապետն ե սխալվել . . .

— Դե. թող ընկնի նրա վրա։ Մեզ վրա չեն գցի։ Ո՞վ կարող ե տարբերել մեկ չինագոն մյուսից։ Մենք կասենք, վոր ուղղակի կատարել ենք մեզ տրված հրամանը։ Բացի այդ, յես չե վոր այդ կրուիներին աշխատանքից մի վայրկյան ավել կտրել չեմ կարող։

Նրանք խոսում եին ֆրանսերեն և Ախ-Զոն վոչ մի խոսք չհամենալով հանդերձ, զիսի ընկավ, վոր իր ճակատագիրն են վորոշում։ Նա գիտեր նույնպես, վոր դա կախված ե յենթասպայից և նա հայցքը հառել եր ուղիղ այդ պաշտոնիայի շրթունքներին։

— Շատ բարի, — ասաց յենթասպան։ — Գործի անցիր։ Ախը չե վոր նա միայն չինագոն յե։

— Յես մի անգամ ել կփորձեմ, վոր հանգիստ լինեմ։ — Շեմմերը հրեց փայտը դանակի տակը, վորը մեքենան վեր բարձրացրեց։

=====

Շեմմերը ձգեց թոկից և Ախ-Զոն մոռացավ «Մեղմ Ուղիի  
որհներգը»։ Դանակը իջավ համր թխկոցով և ուղիղ կտրեց փայտը։

— Հրաշալի յե։ — բացականչեց յենթասպան, վորն այդ բոպե-  
յին ծխում եր. հրաշալի յե, բարեկամս։

Շեմմերը, շոյված գովասանքից՝

— Գնանք, Ախ-Զոռու, — ասաց նա տայխտների բառքառով։

— Ախր յես Ախ-Զոռուն չեմ . . . — սկսեց Ախ-Զոն։

— Լոել, — յեղավ պատասխանը։ — Յեթե մի անգամ ել բէ-  
րանդ բանաս, գլուխդ կջարդեմ։

Վերահսկիչը սպառնաց նրան բռունցքով և նա լռեց։ Ի՞նչ կոդ-  
ներ այստեղ բողոքը։ Այս անդրծովյան դեմքը միշտ վարվում են  
իրենց ուզածի պես։ Նա թույլ տվեց իրեն կապել իր չափսին  
մի ուղղահայաց տախտակի վրա։ Շեմմերը պինդ ձգեց թոկը,  
այնքան պինդ, վոր թոկը էտրեց-մտավ նրա մարմինը և սաս-  
տիկ ցավ պատճառեց։ Բայց նա չեր գանգալում։ Ցավը յերկար  
չի տևի։ Նա զգաց թե ինչպես տախտակը թեքվեց ողի մեջ, հորիզոնա-  
կան դիրք ընդունելով, և փակեց աչքերը . . . Յեվ այդ վայրկյանին  
նա վերջին անգամ դիտեց իր հանգստյան այգին։ Նրան թվաց, վոր  
ինքը նստած ե այդ այգում։ Փչում եր զով քամին և փոքրիկ զան-  
գակները սակավաթիվ ծառերի վրա այնպես քաղցր դողանջում ելին . . .  
յերազկոտ յերգում ելին թռչունները, իսկ հեռվից՝ բարձր պատերի  
այն կողմը, հասնում եր գյուղի խլացուցիչ աղմուկը . . .

Այստեղ նա զգաց, վոր տախտակը կանգ առավ և սեղմվող  
մկաններից հասկացավ, վոր նա պառկած ե մեջքի վրա։ Նա բացեց  
աչքերը։ Ուղիղ նրա վրա, արեի տակ, փայլեց դանակը։ Նա տեսավ  
իր վրա կապված ծանրոցքը և նկատեց, վոր Շեմմերի շինած մեկ  
կապն արձակվեց։ Հետո, նա լսեց յենթասպայի կտրուկ հրամանը։  
Ախ-Զոն արագ փակեց աչքերը։ Նա չուզեց տեսնել, թե ինչպես  
կիջնի դանակը։ Բայց նա զգաց այդ մի ակնթարթում։ Յեվ այդ մի  
ակնթարթում նա հիշեց կրյուշոյին և այն, վոր ասաց կրյուշոն։  
Բայց կրյուշոն սխալված եր — դանակը խտուտ չարավ։ Միայն այդ  
եր վոր նա զգաց, նախ քան դադարեց գիտակցել։



22640 22646

15 40р.

Арм.  
4-490



ДЖЕК ЛОНДОН  
ХОДЯ

На армянском языке

2

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.  
Москва, центр, Никольская, 10.

1  
2

ՀՀ Ազգային գրադարան



NL0387159

650

44902